

Հաշվետվություն

1. Անունը, Ազգանունը

Վահրամ Մկրտչյան

2. Ջրաղեգրած պաշտոնը

ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Նյու Դելի, Հնդկաստան, 2017թ. նոյեմբերի 8-12-ը

4. Հրավիրող կողմը

Հնդկաստանի առևտրաարդյունաբերական պալատների ֆեդերացիա

5. Գործուղման նպատակը (աշխատանքային, որ ինդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Գործուղման նպատակն էր մասնակցել «Բարձրագույն կրթությունը բազմազանության, հասարակական ներգրավվածության և հասարակության համար. Ժողովրդավարության հրամայական» համաշխարհային ֆորումին:

6. Քննարկված թեմաները

Հնդկաստանի առևտրաարդյունաբերական պալատների ֆեդերացիայի կողմից Հնդկաստանի Հանրապետության մայրաքաղաք Նյու Դելիում ս.թ. նոյեմբերի 8-

12-ը կազմակերպած «FICCI բարձրագույն կրթություն 2017 թվական» խորագրով 13-րդ համաժողով-ցուցահանդեսին մասնակցության հիմնական նպատակը ՀՀ բուհերի միջազգայնացմանը նպաստելն էր: Այս շրջանակներում նախատեսվում էր ձեռք բերել կապեր հիմնականում հնդկական բուհական համակարգի ներկայացուցիչների հետ հայաստանյան բուհերի հետ համագործակցությունը սերտացնելու համար:

Գործուղման ծրագիրը պարունակում էր երկու հիմնական բաղադրիչ՝

- մասնակցություն բարձրագույն կրթության զարգացման արդի միջազգային միտումների և խնդիրների վերաբերյալ թեմատիկ պանելային քննարկում-նիստերին,
- հնդկական բուհերի և բուհական ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ համագործակցության հնարավորությունների բացահայտման նպատակով հանդիպումներ B2B ձևաչափով:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

«FICCI բարձրագույն կրթություն 2017» համաժողովի շրջանակներում մեր պատվիրակությանը՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի գծով պրոռեկտոր Ռուբեն Աղգաշյան ու Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի միջազգային գործունեության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Երվանդ Սահակյան, մասնակցություն ունեցանք հետևյալ թեմատիկ քննարկումներին՝

1. «Կրթություն 4.0»,
2. «Ուսանողակենտրոն մոտեցում»,
3. «Տեխնոլոգիաների դերը բարձրագույն կրթության մեջ»,
4. «Տեղաշարժ դեպի ինքնավար բուհեր»:

Թեմատիկ պանելային քննարկումները բավականին հետաքրքիր էին և օգտակար, քանի որ բոլորն էլ, վերջին հաշվով, առնչվում էին 21-րդ դարում բարձրագույն կրթության զարգացման միջազգային արդի միտումներին և հնդկական համակարգի

առանձնահատկություններին սույն լույսի ներքո: Ստացված գիտելիքներն ու դրանց որոշակի առանձնահատկությունները կարող են օգտակար լինել հայաստանյան բարձրագույն կրթական համակարգի բարեփոխմանն ուղղված գործընթացներում:

Համաժողովի շրջանակներում B2B ձևաչափով հանդիպումներ ունեցանք «FICCI բարձրագույն կրթություն 2017» 13-րդ միջազգային համաժողով-ցուցահանդեսի մասնակից 165 կազմակերպություններից թվով 45 ուսումնական և գիտական հաստատությունների ներկայացուցիչների հետ:

Համաժողովին մասնակցում էին նաև պատվիրակներ 72 երկրներից (ԱՊՀ երկրներ, Ասիա և Աֆրիկա): Մեր պատվիրակությամբ հանդիպեցինք նաև ցուցահանդեսի համակազմակերպիչ SEPC (Service Export Promotion Council) կազմակերպության փոխտնօրենի հետ:

Հնդիկ գործընկերների հետ քննարկումների ժամանակ կարողացանք ձեռք բերել համաձայնություն ուսանողների և դասախոսների փոխանակման, համատեղ կրթական և գիտահետազոտական ծրագրերի իրականացման շուրջ հիմնականում ինժեներատեխնիկական և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Արդյունքում ձեռք են բերվել մի շարք հեռանկարային պայմանավորվածություններ շարունակելու էլեկտրոնային երկխոսությունը՝ նպատակ ունենալով մշակել, փոխհամաձայնեցնել և ստորագրել կրթական և գիտահետազոտական ոլորտներում համագործակցության մտադրությունների համապատասխան հուշագրեր կամ շրջանակային երկկողմ պայմանագրեր: Դրանք հնարավորություն կընձեռեն ձևավորել ուսանողների և դասախոսների, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող կրթական ծրագրերի փոխանակման լավ նախադրյալներ:

Հարկ եմ համարում նշել, որ գործուղման ժամանակ հանդիպում ենք ունեցել նաև Հնդկաստանի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Մարտիրոսյանի հետ և քննարկել հայ-ինդիական կրթական հաստատությունների փոխգործակցության վերաբերյալ բազմաթիվ հարցեր: Հանդիպման ընթացքում դեսպանը տեղեկացրեց, որ Մադրասի տեխնոլոգիական ինստիտուտը հայկական կողմին տրամադրում է մեկ անվճար տեղ այդ համալսարանում ուսումնառելու համար:

Միանգամայն իրատեսական են հնդկական 2-3 առաջատար համալսարանների հետ համագործակցության պայմանագրերի կնքումը, կրկնակի դիպլոմի շնորհմամբ մագիստրոսական համատեղ կրթական ծրագրերի մշակումն ու կիրարկումը, ուսանողների և ասպիրանտների փոխանակումը:

8. Գործուղվողը

ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Վահրամ Մկրտչյան

9. Ստորագրությունը, ամսաթիվը

04.12.2017